

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2013թ. փետրվարի 4-ից 8-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Քրիստիան Հյուլսագերը և գյուղատնտեսության ԳՀՀ ենթաբաժնի պետ Քարստեն Լարսենը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Գյուղատնտեսության համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2013 թ. փետրվարի 12-ից 13-ը ՀՀ ԱՎԾ ում էին Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Լարս Թյուգեսենը, միջազգային համագործակցության բաժնի ավագ խորհրդատու Յեսպեր Ելեմոսեն, Գերմանիայի վիճակագրական ծառայության վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ռինգո Ռաուփախը՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի կառավարող կոմիտեի 9-րդ նիստին և ծրագրի փակման արարողությանը մասնակցելու նպատակով,
- ✓ 2013թ. փետրվարի 13-ից 14-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) վիճակագրական համագործակցության բաժնի պետ Կլաուդիա Յունկերը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի փակման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ համագործակցության ռազմավարության, գլոբալ գնահատման, գործընկերների կողմից գնահատման և նախորդ գլոբալ գնահատումից հետո առաջընթացի, հաջորդ ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի վերաբերյալ հարցերը քննարկելու նպատակով,
- ✓ 2013թ. փետրվարի 11-ից 22-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ Հաշվառումների բյուրոյի փորձագետներ Սասկիա Դերիզը և Ջերզի Վիեկզորեկը՝ 2011թ. Հայաստանի մարդահամարի տվյալները վիճակագրական հաշվետվություններում ներկայացնելու վերաբերյալ աջակցություն ցուցաբերելու նպատակով: